

ՏՏ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 15-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Ելույթ ՏՏ Սահմանադրության 15-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում)

Գ. Գ. Նարությունյան - ՏՏ ՄԴ նախագահ

Նայասարանի Նանրապետության մեծահարգ պարոն Նախագահ,

Վեհափառ Տեր,

Նանդիսավոր արարողության հարգելի մասնակիցներ,

Մեր ժողովրդի պարմական ճակարագրում Սահմանադրություն երեւոյթն ունեցել է հիմնաքարային նշանակություն: Պարմահայր Մովսես Խորենացին 365 թվականի Աշոիշապի ազգային-եկեղեցական ժողովի ընդունած Կանոնական սահմանադրության հետ էր կապում ողորմածության հասարակումը եւ անգթության հաղթահարումը Նայասարան երկրում:

Նայ իրականության մեջ իրավակարգավորումը երբեք ինքնանպասակ չի եղել, այն կտրված չի եղել մեր սոցիալական կյանքից ու այն վերափոխելու հրամայականներից՝ նույնիսկ պետականության կորստի պայմաններում: Օրենքն ու իրավունքը բախտորոշ նշանակություն են ունեցել մեր լինելության ու ինքնության պահպանման գործում: Դրա լավագույն վկայություններն են նախաքրիստոնեական եւ հետքրիստոնեական շրջանի հայ իրավունքի հուշարձանները, Ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունները, Նովհաննես Օձնեցու Նայոց կանոնագիրքը, հայ գաղթօջախների դարասարանագրքերը, Մխիթար Գոշի «Դարասարանագրքի» եւ Շահամիրյանների «Որոգայթ փառացի» նախաբանները, որոնք, ի մասնավորի, իրավական ամբողջական փեսություններ են ներկայանում:

Պարմական իրողությունները միանշանակ վկայում են, որ երբ հայ իրականության մեջ շեշտը դրվել է փոխհամաձայնությամբ ձեռք բերված կանոնների միջոցով ողջ հանրային կյանքը կարգավորելու վրա, ակնառու առաջընթաց է գրանցվել բոլոր ոլորտներում: Թեկուզ սաղմնային վիճակում, սակայն սահմանադրական մշակույթը մեր գոյության ու զարգացման համար առանցքային նշանակություն է ունեցել դեռեւս մարդկային հանրության պարմության արշալույսին: Նակառակը, անհամաձայնությունները կամ դրանք բռնությամբ հաղթահարելու փորձերն են դարձել անհաջողությունների պարճառ: Բազում են նման օրինակները ոչ միայն մեր, այլեւ շարքայլ երկրների պարմության ծալքերում:

Վերածննդի դարաշրջանի ազգարական իրավամբաժողության սաղմնավորումը Եվրոպայում առաջին պլան մղեց մարդկային իրավունքների ու ազգությունների երաշ-

խավորման անհրաժեշտությունը, որը հեղափոխական մրաժողության ալիքի վրա իր առաջին համակարգված գործնական արտահայտությունը գրավ 1689 թվականին Անգլիայում ընդունված Իրավունքների բիլլում: Այն հեղափոխությունը գրավ Իրավունքների մասին 1789 թվականի ամերիկյան հռչակագրում, ինչպես նաև Մարդու և քաղաքացու իրավունքների մասին նույն թվականի ֆրանսիական հռչակագրում: Վերջինս բովանդակում է սահմանադրականության հոյակապ բանաձևերում, շեշտելով, որ **«Այն հասարակությունը, որում ապահովված չեն իրավունքի երաշխիքները եւ չկա իշխանությունների տարանջատում, չունի Սահմանադրություն»:**

Ձեւավորվում էր պետական-հանրային կյանքի կազմավորման նոր տրամաբանություն, որի առանցքն իրավունքի կարեւորումն ու իշխանության սահմանափակումն էր: Նակոր եւ Շահամիր Շահամիրյանները դեռեւս 1773 թվականին ապագա անկախ Նայասպանի համար գրվող Սահմանադրությունը պարզապես անվանեցին «Ռոզայթ փառաց»՝ անվան մեջ ամփոփելով սահմանադրական կարգավորումների ողջ իմաստն ու տրամաբանությունը:

Մովելով սահմանադրական իրավամրաժողության այդ սկզբներից՝ ազատական-իրավական զարգացումներն աստիճանաբար կյանքի կոչեցին դեռեւս վաղ միջնադարում ճանաչում գրած այն հանճարեղ ընդհանրացումը, որ եթե մարդկային կյանքի օրենքները չեն բխում բնական իրավունքից, բնության օրենքներից, ապա դրանք օրենքներ չեն, այլ դրանց այլասերումը: **Արեւմտյան քաղաքակրթությունների համար գաղափարաբանական այդ հենքի վրա առաջընթացի գլխավոր ու մնայուն երաշխիքը դարձավ հասարակության ժողովրդավարական ներուժի խելամիտ իրացումը:**

Նախորդ հազարամյակն իր հետ բերեց ինչպես շրջադարձային բազում լուծումներ, այնպես էլ համակարգային աննախադեպ հակամարտություններ ու փլուզումներ, որոնք տասնյակ երկրների համար սահմանադրական նոր լուծումների անհրաժեշտություն թելադրեցին: Դրա վերջին երկու մեծ ալիքները ծավալվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից եւ ապա՝ ԽՍՀՄ փլուզումից հետո: Երկու դեպքում էլ զարգացումները գնացին պատմականորեն քննություն բռնած եւ այլընտրանք չունեցող արժեհամակարգային միեւնույն ուղիով՝ սահմանադրական ժողովրդավարություն հաստատելու անհրաժեշտության գիտակցման եւ երաշխավորման ճանապարհով:

Սահմանադրական օրենսդրության ձեւավորման նորագույն պատմությունը Նայասպանում վերսկսվում է 20-րդ դարի սկզբին՝ հայոց պետականության վերածննդով, և շարունակվում է մինչև մեր օրերը: Այն անցել է երեք պատմական փուլ, որոնցից յուրաքանչյուրին, բնականաբար, հաջորդել է սահմանադրական իրավունքի որակական իր փոփոխում:

Նորանկախ Նայասպանի Նանրապետությունն իր առաջին քայլերն սկսեց ազգային-պետական իրավական համակարգն ամուր ու որակապես նոր հիմքերի վրա դնելու

փորձով: Առաջին նման փաստաթուղթը 1990 թվականի օգոստոսի 23-ին ՆՏ Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ Նայաստանի անկախության մասին հռչակագիրն էր: Նռչակագրի նախապարաստման ու փարբեր նախագծերի համադրման համար սրեղծվեց հարուկ խորհրդարանական հանձնաժողով: Վերջինիս աշխարանքի բնույթը, ներկայացված փարբեր նախագծերի քննարկման ընթացքը շար ընդհանրություններ ունեին հայկական իրականության մեջ հրավիրված սահմանադիր ժողովների հեր՝ առաջին հերթին հասարակական համաձայնության մթնոլորտի ապահովման առումով: Պարահական չեր, որ Նռչակագիրն ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Բովանդակային առումով Անկախության հռչակագիրը հայ սահմանադրական մշակույթի պարմության մեջ որակապես նոր էջ բացեց: **Այն հիմնարար, հերետողականորեն համակարգված, պարմարամբանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային սահմանադրահրավական զարգացումների ընդհանուր փրամբանությունից ելնող նորմերի ու սկզբունքների համակարգային ամբողջականություն է,** որը երբեք չի կորցնի իր թե՛ պարմական եւ թե՛ իրավական-արժեբանական նշանակությունը:

Այս հիմքի վրա Նայաստանի նորանկախ Նանրապերությունը ձեռնամուխ եղավ երկրի Հիմնական օրենքի մշակմանը պարմական մի այնպիսի ժամանակահատվածում, երբ համակարգային փլուզման դժվարությունները մեզանում ուղեկցվում էին պարերագմի իրողությամբ, բնական աննախադեպ աղերի ավերիչ հերբուանքներով, վերարարադրական խոր ճգնաժամով, որոնք իրենց բնորոշ կնիքն էին դրել երկրի հանրային-քաղաքական կյանքի ու իրավական գործընթացների վրա: Այսուհանդերձ, Սահմանադրական հանձնաժողովին հաջողվեց՝ Նախագահ Լեւոն Տեր-Պերրոսյանի ղեկավարությամբ, աշխարանքային խմբի, հարկապես Էդվարդ Եգորյանի ակտիվ ջանքերով, ի մի բերել բազմաթիվ նախագծերում արված առաջարկությունները եւ հանրաքվեի ներկայացնել Գերագույն Խորհրդի հավանությանն արժանացած մի նախագիծ, որը շրջադարձային եղավ մեր երկրի իրավական կյանքում: Ընդունված Սահմանադրության մեծագույն առաքելությունը եղավ այն, որ մեր պերականության կայացմանն անշրջելի լիցք հաղորդեց, դրսեւորվեց որպես բարդագույն իրավիճակները համակարգային փոխկապվածության մեջ հաշվի առած ու երկրի սահմանադրական կայունությունը երաշխավորող Տիմնական օրենք: Մի շարք անցումային երկրների դա չհաջողվեց հիմնականում այն պարճառով, որ սահմանադրական մակարդակում չապահովվեց պերական մարմինների ապալեգիփիմացման վրանգի կանխումը:

Բնական էին նաեւ սահմանադրական զարգացումների հերագա քայլերը մեր երկրում, որոնք համարժեք էին հանրային կյանքի զարգացումներին, Նայաստանի մի-

ջազգային ինքնագրման խորացմանը, սրանձնած միջազգային պարավորություններին, իրավունքի գերակայության երաշխավորման հրամայականներին: Նախագահ Ռոբերտ Քոչարյանի ու փարբեր քաղաքական ուժերի նախաձեռնությունները սահմանադրական զարգացումների ուղղությամբ հանգեցրեցին 2005թ. բարեփոխումներին, որոնց արդյունքում սահմանադրական մի շարք լուծումներ երկրում իրավունքի գերակայության հաստատման կարելուր նախադրյալներ ստեղծեցին:

Երկրում սահմանադրական զարգացումներն անհրաժեշտ ու հավասարակշռված դիմամիկա պետք է ունենան: Դա բնական զարգացման փրամաբանությամբ է թելադրված: Սահմանադրությունը չի կարող դառնալ քարացած դոգմաների ժողովածու: Խորհրդանշական է հետևյալ դիպվածը. Ալբերտ Էյնշտեյնը համալսարանում քննության ժամանակ ուսանողներին առաջադրում է այն նույն հարցերը, ինչով նրանք քննություն էին հանձնել նախորդ փարում: Ուսանողներից մեկը զարմանքով հարցնում է. դոկտոր Էյնշտեյն, չէ՞ որ սրանք նախորդ փարվա հարցերն են: Էյնշտեյնը պատասխանում է. միանգամայն ճշմարիտ եք, սակայն դրանց պատասխաններն ինձ համար այլևս նույնը չեն:

Սահմանադրությունը կոչված է երաշխավորելու հանրային կյանքի դիմամիկ հավասարակշռությունը, հանդես գալու որպես կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ շարունակաբար նորոգվող հասարակական համաձայնություն:

Սակայն սահմանադրական փեքսպային լուծումները, դրանց բովանդակային զարգացումները դեռևս բավարար չեն: Էականն այդ լուծումների ու իրական կյանքի միջև անջրպետի հաղթահարումն է, որն այսօր դարձել է մեր պետական օրակարգի առանցքային խնդիրներից մեկը:

Սահմանադրությունից՝ սահմանադրականություն, իրավական, ժողովրդավարական պետության կարգախոսից՝ քաղաքացիական հասարակության կայացում՝ սրանք ոչ միայն նպատակ, այլև կոնկրետ խնդիրներ են, որոնք կանգնած են մեր երկրի առջև եւ նույնքան կոնկրետ լուծումներ են պահանջում:

Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիփարկվել միայն նեղ իրավական առումով, պրագմատիկ իրավահարաբերությունների կամ վերացական հասկացությունների համարեքստում: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը խոր մշակութային երեւույթներ են, ունեն արժեհամակարգային փոխպայմանավորված ամուր արմատներ, դրանց իմաստավորման, ընկալման ու ճանաչողության քաղաքակրթական հստակ կողմնորոշիչներ ու մակարդակ: Այդ փոխարացման շրջանակներում է, որ սահմանադրական մշակույթն իր հերթին պայմանավորում է սահմանադրական ժողովրդավարության մոդելի, դրա զարգացման ռազմավարության ընտրությունը:

Յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է, արժեքավորված ներկայությունը ժամանակի մեջ: Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի սահմանադրականության արժեքային կողմնորոշիչները պայմանավորված են նրա սոցիալ-մշակութային դիմագծով եւ թելադրում են կոնկրետ սահմանադրական լուծումների առանձնահատկությունները:

Սահմանադրականությունն իր հերթին սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում, անհատի սոցիալական վարքագծի բոլոր դրսևորումներում: Խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ **որպես դրա գոյության կենսապայման**, որտեղ սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն են դառնում:

Պետականության կայացումը րեւական ու դժվարին գործընթաց է: Նամակարգային ամեն մի սխալ վերարտադրվող շղթա կարող է դառնալ ու ավերիչ հետեւանքներ ունենալ՝ առավել եւս, եթե դա վերաբերում է արժեքանական կողմնորոշումներին: Նայաստան պետության համար առանցքային խնդիր է իրավական ողջ համակարգը սահմանադրական արժեքանությանը ներդաշնակելը, թե՛ իրավաստեղծ քաղաքականության մեջ եւ թե՛ իրավակիրառ պրակտիկայում սահմանադրական հիմնարար արժեքների ձեւախեղումներից խուսափելը, իրավունքի գերակայության կայուն երաշխիքներ ապահովելը: Անառարկելի ճշմարտություն է, որ այնտեղ, որտեղ իրավունքը հանդես է գալիս առանց ժողովրդավարության, սկիզբ է առնում դիկտատուրան, իսկ ժողովրդավարությունն առանց իրավունքի՝ պարզապես ֆարս է: Մեր պետության սահմանադրական անձնագրի անփոփոխելի բնութագրիչն է իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության կայացումը: Այս որակներն օրգանական ամբողջականություն են եւ թելադրում են համարժեք վարքագիծ թե՛ պետության եւ թե՛ քաղաքացիական հասարակության կողմից: Յուրաքանչյուր շեղում այդ որակներից՝ սպառնալիք է մեր ապագային ու մեր ազգային անվտանգությանը:

Մեր պետական կյանքի րասնհինգամյա սահմանադրական րարեգրությունը վկայում է, որ որքան էլ մեծ է եղել Սահմանադրության դերը հանրային խոր ճգնաժամներից խուսափելու համար, այսուհանդերձ, շարունակում է զգալի մնալ խզումը Սահմանադրության եւ սոցիալական իրականության միջեւ: Այս երեւույթը բնորոշ է անցումային բոլոր երկրներին, որոնք օբյեկտիվ իրողություններից ելնելով ընտրեցին մոդելային սահմանադրությունների արմատավորման ճանապարհը: Սակայն անցումագիտության ներկա ընդհանրացումները վկայում են, որ նման իրավիճակներում ավելի մեծ ջանքեր են անհրաժեշտ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, Սահ-

մանադրության ինքնաբավությունը երաշխավորելու, սահմանադրականության, պառլամենտարիզմի ու արդարադատության նոր որակ ապահովելու համար: Արդի մարտահրավերներին համարժեք արձագանքի հրամայականը պահանջում է պետության եւ քաղաքացիական հասարակության փոխգործակցության որակապես նոր մակարդակ, առավել ակտիվ համակարգված քայլեր ժողովրդաիշխանության ամրապնդման ու սահմանադրական ժողովրդավարության հաստատման ճանապարհին:

Ինչ են հուշում պատմության դասերը եւ սահմանադրական զարգացումների միջազգային փորձը՝ հայ սահմանադրականության զարգացման ներկա հիմնախնդիրների հոլովություն: Դրանք, մասնավորապես, թելադրում են, որ.

- առանց հանրային կյանքի խելամիտ իմաստավորման, ինչպես վկայում էր մեծ Քերթոզահայրը, չենք կարող «աշխարհական կարգերի գիտություն ձեռք բերել եւ քաղաքական կարգեր սովորել»,

- առանց հասարակական համաձայնության, փոխվստահության, հանդուրժողականության ու քաղաքացիական համերաշխության երկրում սահմանադրականության հաստատումն անհնարին է,

- սահմանադրական արժեքներն ապրող իրողություն կարող են դառնալ միայն ու միայն այն ժամանակ, երբ դրանք գիտակցված անհրաժեշտություն են թե՛ պետական իշխանության եւ թե՛ հասարակության յուրաքանչյուր անդամի համար,

- հասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջեւ եղած աններդաշնակության հաղթահարումը վճռորոշ պայման է երկրում սոցիալական անհամաձայնությունների ու հնարավոր կարակլիզմների հաղթահարման համար,

- սահմանադրական իրավական պետության գերագույն խնդիրը պետք է լինի իրավունքի երաշխավորումը, ապահովումն ու պաշտպանությունը եւ իշխանության սահմանափակումը,

- առանց սահմանադրական կայունության երկրում դինամիկ ու առաջընթաց զարգացում երաշխավորելն անհնարին է,

- Սահմանադրությունը չի կարող դիպվել որպես իրավական գործիք պետական իշխանության ձեռքում, այն քաղաքացիական հասարակության Տիմնական օրենքն է, ու առաջին հերթին սահման է դնում իշխանությանը եւ երաշխավորում է մարդկանց բնական իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Սահմանադրության գերակայության երաշխավորումը ողջ պետական իշխանության գերագույն խնդիրն է: Այս հարցում կարեւոր դեր է վերապահվում նաեւ սահմանադրական դատարաններին: Դատական սահմանադրական վերահսկողությունը մեր երկրում ոչ միայն կայացել, այլեւ միջազգային լայն ճանաչում է ստացել: Էսպես մեծացել

է նաեւ սահմանադրական դատարանի ներագոյնացումը ներպետական սահմանադրաիրավական զարգացումների վրա: Միայն վերջին երկուսուկես փարիների ընթացքում Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը ծավալուն իրավական դիրքորոշումների հիման վրա որոշումներ է կայացրել ավելի քան 160 գործերով, որն ավելին է, քան Ռուսաստանի Դաշնությունում, Վրաստանում, Ադրբեջանում, Լատվիայում, Լիբիայում եւ Մոլդովայում՝ միասին վերցրած: Ընդ որում, 29 գործով վեճի առարկա օրենքների դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը հակասող եւ անվավեր, որը նույնպես միջազգային չափանիշներով գրեթե աննախադեպ է: Նման իրավիճակի համակողմանի վերլուծությունը՝ թե՛ դրականի եւ թե՛ բացասականի առումներով, սահմանադրական դատարանը ներկայացրել է վերջին երկու փարիների իր փառեկան հաղորդումներում:

Սահմանադրական ախտաբանության ու վերահսկողության համակարգը մեզանում հեփազա զարգացման անհրաժեշտություն ունի: Վերջին սահմանադրական զարգացումները միայն կիսաքայլ էին այս ուղղությամբ: Գերմանիայի Դաշնային Նանրապետության, Արեւմտյան Եվրոպայի բազմաթիվ այլ երկրների փաստամյակների փորձը վկայում է, որ այս ոլորտում համակարգային բացերն անհամարեղելի են իրավական պետության կայացման հիմնարար սկզբունքների հետ: Գործառույթ – ինստիտուտ – լիազորություն շղթայի դինամիկ ներդաշնակությունն է սահմանադրական վերահսկողության արդյունավետության հեփազա բարձրացման, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության ու Սահմանադրության գերակայության ապահովման գլխավոր երաշխիքը:

Այս հիմնախնդիրը համակողմանի քննարկման առարկա կդառնա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եւ Եվրախորհրդի Վենեփիկի հանձնաժողովի հետ համարեղ 2010թ. հոկտեմբերին Երեւանում հրավիրվող միջազգային խորհրդաժողովում, որը նվիրվում է ՏՏ Սահմանադրության 15-ամյակին:

Սահմանադրության գերակայության երաշխավորումը սահմանադրական նորմափիվ պահանջ է եւ բխում է առաջին հերթին Սահմանադրության արժեքանական կողմնորոշիչներից ու սահմանադրական կարգի հիմունքների հիմնարար սկզբունքներից: Չափազանց կարեւոր է, որ օրերս, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի սրեղծման քսանամյակի կապակցությամբ հղած իր ուղերձում Նայասարանի Նանրապետության Նախագահ պարոն Սերժ Սարգսյանը, ի մասնավորի, շեշտել է, որ Նայասարանի Նանրապետության համար բարձրագույն արժեքներ են մարդկային արժանապարվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, համերաշխու-

թյունը, մարդու իրավունքների հարգումը, որոնց արմատավորումը մեր պետական օրակարգի առաջնահերթություններից է:

Դրանք՝ որպես նաև սահմանադրականության անկյունաքարային արժեքներ, պահանջում են անհեղինակի իրացում՝ մեր երկրի յուրաքանչյուր բնակչի համար Սահմանադրությունն օր առաջ դարձնելով ապրող իրողություն:

Նանդիսավոր արարողության հարգարժան մասնակիցներ,
սիրելի հայրենակիցներ,

շնորհավորում եմ մեզ բոլորիս, Նայասրանի Նանրապետության բնակչությանը, ողջ հայ ժողովրդին Սահմանադրության 15-ամյակի կապակցությամբ եւ ավարտում խոսքս՝ հիշեցնելով Մեծ պարմահոր պարգամը՝

չվրդովեցնենք երկրում ու մեր ներսում խաղաղությունը,
խուսափենք րզիպությամբ չարափառության հաստատումից,
հավարարիմ մնանք մեր առաքելական հավաքքին,

Սահմանադրությամբ հաստատենք ողորմածությունը Նայասրան երկրում:

Մրանք մեր պարմական ճակատագրի հրամայականներն են եւ յուրաքանչյուրիս պարտքն ու պարասխանարվությունը սերունդների առջեւ:

Այլընտրանք՝ պարգապես գոյություն չունի:

03.07.2010թ.